

---

---

II

ՀԱՅԿԻ ԵՎ ԲԵԼԻ ԱՌԱՍԴԵԼԻ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐԸ.  
ՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ<sup>1</sup>

ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հնդեվրոպական որոշ առասպելներում \*dehnu- կամ \*dhonu- կոչվող գետային կամ ջրային աստվածություններ հակադրված են աստվածների կամ հերուների, որոնք կապված են \*h₂ner(t)- «այր, տղամարդ, այրական ուժ» արմատին: Նրանք պայքարում են իրար դեմ, և \*h₂ner(t)- տղամարդիկ փախցնում են \*dehnu- / \*dhonu- կանանց ու ամուսնանում նրանց հետ: \*Dehnu- / \*dhonu- ների առաջնորդի անունը համադրելի է արևմտասէմական Ba'äl (Բահաղ, Բաալ) դիցանվան հետ: \*H₂ner(t)- ների առասպելական հակառակորդները, հավանաբար, նույնացվել են պատմական սեմական մի ցեղի հետ<sup>2</sup>: Ստորև ներկայացվում են այդ առասպելները:

Հնդկաստան

Հին հնդիկների աստվածները բաժանվում են երկու հակամարտ խմբերի՝ դևաներ և ասուրաներ: Դևա-աստվածների արքան է Բնդրան, իսկ ասուրաների արքան՝ Բալին<sup>3</sup>: Ասուրաները բաժանվում են երկու ընտանեկան խմբերի՝ դանավաներ (dānava), որոնց մայրն է Դանուն (Dānu) և դայտյաներ, որոնց մայրն է Դանուի քույր Դիտին (այս խմբերն իրարից շատ չեն տարրերվում): Բալին Դանուի որդիներից է՝ դանավա: Որպես դևա-աստվածների արքայի հակառակորդների արքա, նա կարող է համարվել հնագույն՝ վեդայական առասպելում Բնդրայի հակառակորդ Վրտրա օձի՝ Դանուի որդու ուշ համապատասխանությունը:

<sup>1</sup> Սույն հոդվածի նախնական՝ կրճատ տարրերակը տե՛ս A.Y. Petrosyan. The Indo-European \*H₂ner(t)-s and the Danu Tribe.– Journal of Indo-European Studies. Vol. 35 (2007), №3 & 4, p. 297–310.

<sup>2</sup> Մ. Դեքստերը, քննելով \*dānu- / \*dhonu-ի հետ համադրելի առասպելական համարյա բոլոր կերպարները, նրանց համարում է հնդեվրոպացիների կողմից ենթարկված մի անհայտ ցեղի հիշողությունը, որոնք անձնավորվել են ջրային աստվածուհու կերպարի միջոցով, տե՛ս M. R. Dexter. Reflection on the Goddess \*Donu. – Mankind Quarterly. Vol. XXXI, № 1 & 2, p. 45–58; Նույնի համար է առաջարկվել հնագույն՝ վեդայական առասպելում Բնդրայի հակառակորդ Վրտրա օձի՝ Դանուի որդու ուշ համապատասխանությունը:

<sup>3</sup> Այս առասպելների վերաբերյալ տե՛ս Ա. Սույն առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքսում և հայոց ազգածագման խնդիրը. Երևան, 1997, էջ 102 հոդված, A. Y. Petrosyan. The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic–(այսուհետև՝ Epic).– Journal of Indo-European Studies Monograph, № 42. Washington DC, 2002, p. 99 ff.

<sup>4</sup> Այս առասպելների վերաբերյալ տե՛ս հատկապես C. Hopkins. The Righteous Demon: A Study of Bali. Vancouver, 1984.

*Առասպելի ստանդարտ տարբերակներում դևաների և աստրաների պատերազմում հաղթում են Բալին ու նրա հետևորդները և դևաներին դուրս մղում երկնքից: Բալին դառնում է երկնքի, միջին աշխարհի և երկրի արքա: Այդ ժամանակ Վիշնու աստվածը կարողանում է խարեւորյամբ հաղթել Բալիին և աշխարհը վերադարձնել Ինդրային: Բալին ուղարկվում է ստորին աշխարհ (նա համարվում է ստորերկրայքի արքա): Այլ տարբերակներում Ինդրան է հաղթում պատերազմում: Ինդրան ամուսնանում է Շաշիի՝ դանավա (կամ դայտյա) Պուլումանի դստեր հետ: Պուլումանը սպանվում է Ինդրայի կողմից, քանի որ ուզում էր անիծել աստծուն՝ իր դստերն առևանգելու համար:*

*Ինդրան հնդեվրոպական ամպրոպի և ռազմի աստծու տիպիկ օրինակ է: Նա կատարում է բազում այրական քաջազործություններ և Միգ-վեդայում հաճախ կոչվում է nrtama « ամենաարի, ամենաայրական, ամենաառնական», հնդեվրոպական \*h₂ner- « այր» արմատից (I.29.1; III.30.22; IV.22.2; VI.18.7; VII.6.4; VIII.24.1; X.29.1 և այլն): Ավելին, նրա անունը ևս, բատ մի կարծիքի, նույնպես ծագում է \*h₂ner- ի սեռական \*h₂nro- ձևից<sup>4</sup>: Դանու անունը ներկայացնում է հնդեվրոպական \*deh₂nu- (\*dānu-) « զետ » բառը, \*deh₂- «hnuščel» արմատից, իսկ դանավան (< \*dānawo-)՝ \*dānu- ի ածանցյալն է: Բալիի ծագումն անհայտ է: Ամենայն հավանականությամբ, այն փոխառված անուն է:*

### Իրան և Օսեթիա

*Հին իրանական ավաղույթում հակամարտող կողմերն են իրանցիները և տուրերը (ուշ աղբյուրներում՝ թուրանցիներ): Ավետարյում dānawa-ն չար ու հզոր տուրական մի ցեղի անուն է, իսկ Narava-ն՝ անունը կամ մականունն է իրանական մի հզոր հերոսի՝ տուրերի հակառակորդի:*

*Օսական էպոսի հերոսները կոչվում են նարթեր: Դոնքետտըրը ջրային և ծովային աստված է, Պուեյդոնի համապատասխանությունը, ջրային թագավորության և նրա բնակիչների տիրակալը: Դոնքետտըրներ են կոչվում նրա որդիներն ու դուստրերը, ջրային աստվածությունների մի դաս: Մեծ նարթ Ախսարթազը (կամ նրա երկվորյակ եղբայր Ախսարը) մտնում է ստորջրյա թագավորություն և ամուսնանում Զերասսայի՝ Դոնքետտըրի դստեր հետ: Վերջինս դառնում է նարթ-հերոսների տոհմի նախամայրը: Բարթազը, նարթերից հզորագույնը, որդին է Ախսարթազի ու Զերասսայի որդի Խամլցի և դոնքետտըրների ցեղի թզուկ թզենների տոհմի մի կնոշ: Բարթազն ամպրոպի աստծու վիպական մարմնավորումն է, հնդկական Ինդրայի օսական համապատասխանությունը<sup>5</sup>:*

*Աղքաղական էպոսում Բաթրազի հակառակորդ ջրային վիշապը կոչվում է Բյազը<sup>6</sup>: Աղքաղական էպոսում Բաթրազն այնքան էլ աչքի ընկնող հերոս չէ՝*

<sup>4</sup> Համեմատական առասպելարանության համատերսում տէ՝ ս. B. Linton. Priests, Warriors, and Cattle. A Study in the Ecology of Religion. Berkeley-Los Angeles, 1981, p. 97, 122 (*hwṛgh* գրականությամբ).

<sup>5</sup> Խ. Դ յ մ ե զ և լ ի Սկիֆյ և նարտյ. Մ., 1990, ս. 14 սլ.

<sup>6</sup> Միֆն նարում միա այնքան էլ աչքի ընկնող հերոս չէ՝

նրա ցիկլի բազմաթիվ այուժեներ փոխառված են օսականից (սարմատա-ալանականից)<sup>7</sup>: Ըստ այդմ, Բյազո անունը կարելի է դիտել որպես փոխառված հնդկական Բալիի կորսված ալանական համապատասխանության անունից:

Նարակա ձեր ներկայացնում է \*h₂ner-ի մի ածանցյալը: Նարք անվանումը ևս բիւցվում է \*h₂ner-t-ից<sup>8</sup>: Դոնքետտրը մեկնաբանվում է որպես «օրի (սուրբ) Պետրոս», «օրային Պետրոս», օսերեն don < \*dānu - «գետ» արմատից<sup>9</sup>:

### Հայաստան

Հայոց ազգածին ավանդության հերոսները հակադրված են իրենց հարավի սեմական հարևաններին՝ Բարելոնին, Սիրիային և Սուրենտանին: Հայոց առաջին նախնին է Հայկը, Նոյի որդի Հարեթի սերնդից: Բարելոնյան աշտարակաշինությունից հետո Հայկը հրաժարվում է ենթարկվել Բարելոնի բռնակալ Բելին և նահապետական իր հսկայական բնտանիքի հետ՝ բաղկացած երեք հարյուր տղամարդուց (այր), զնում է հյուսիս և հաստատվում Հայաստանի տարածքում: Բելը մեծ զորքով հարձակվում է Հայկի վրա, բայց ճակատամարտում սպանվում է Հայկի նետով: Մի քանի սերունդ հետո Հայկի հետնորդ Արամը, հայոց երկրորդ կառնիմը, հաղթում է Բարշամ անունով մի հակառակորդի, Բարշամին աստծու վիպական կրկնորդին (ծագում է սիրիական Ba'ál Šamin × երկնքի տեր» դիցանունից)<sup>10</sup>: Արամը Հայկի «երկրորդ տիպարն» է<sup>11</sup>, և, ըստ այդմ, Բարշամինն էլ կարող է դիտվել որպես Բելի «երկրորդ տիպար»: Բարշամին աստծու տաճարը Հայաստանում գտնվում էր Եփրատի ամենավերին հոսանքների շրջանում՝ Թորդան գյուղում: Ըստ պատմական ավանդույթի, այդ պաշտամունքը հիմնվել է Տիգրան Մեծի կողմից, մ. թ. ա. I դ. (Խորենացի Բ. ժող), բայց Ba'ál-ի առաջին հիշատակությունն այդ շրջանից հայտնի է ավելի քան հազար տարի առաջ: Մի արևմտասեմական (քանանական, ուզարիտյան) առասպելի խեթերենով ավանդված տարրերակում Բաալ աստվածը զնում է Մալա (Եփրատ) գետի ակունքները, իր հայր Էլկունիքսայի բնակավայրը<sup>12</sup>:

Արամի որդի Արա Գեղեցիկը ժամանակակիցն է ասորեստանյան թագուհի Շամիրամի, Բելի ժառանգ Նինոսի այրու: Վերջինս երբեմն նույնացվել է Բելին կամ համարվել նրա որդին (Խորենացի Ա. է): Շամիրամը ձգտում է ամուսնալ Արայի հետ, բայց Արան հրաժարվում է ենթարկվել վավաշոտ թագուհուն և սպանվում է ասորեստանցիների դեմ ճակատամարտում:

<sup>7</sup> Տէ ս օրինակ, Ա. Տ. Ռ ո թ ա ն օ վ. Գերութեան էպոս ադыгов “Нарты”. – Сказания о нартах – эпос народов Кавказа. М., 1969, с. 218 сл.

<sup>8</sup> Հմին. Վ. Ի. Ա բ ա ե վ. Историко-этимологический словарь осетинского языка. М.-Л., с.в.

<sup>9</sup> Նույն տեղում:

<sup>10</sup> Հետաքրքիր է, որ, ըստ Խորենացու, Բարշամը հետմահու աստվածացվել է ասորիների կողմից, և Շիրակացու հիշատակած մի հին լեզենդում էլ նա հանդես է գայիս որպես ասորիների նախնի. տե՛ս Ա ն ա ն ի ա ս Շ ի ր ա կ ա շ գ ի Շիրակացիութիւն եւ տոմար, Երևան, 1940, էջ 37:

<sup>11</sup> Ա. Ա ր է դ յ ա ն. Երկեր, հ. Ա, Երևան, 1966, էջ 55:

<sup>12</sup> H. A. Hoffmann. Hittite Myths. Atlanta, 1990, p. 69.

Հայկը և Արամը դիտվում են որպես ամպրոպի աստծու վիպական ժառանգ-ներ<sup>13</sup>: Սեբեոսի զրքում Հայկը կոչվում է արի: Այս մականունը կապված է այր «տղամարդ» բառի հետ որը հանգում է \*h<sub>2</sub>ner- արմատին (\*h<sub>2</sub>nryo- նախաձելից կամ \*h<sub>2</sub>nēr > \*ainir- > այր զարգացմամբ)<sup>14</sup>: Արի բառը նաև հեթանոս հայերի զերագույն Արամազդ աստծու մշտական մակդիրն է (Ազարանգեղոս 53, 68, 127): Արամազդը մյուս աստվածների հայրը և նահապետն էր, վիպական Հայկ նահապետի աստվածային համապատասխանությունը: Նա նույնացվել է հունական ամպրոպային Զևս աստծուն և Խորենացու մոտ կոչվում է ամպրոպային (Խորենացի Բ. ձq): Արամազդ և Բարշամին աստվածների հարաբերությունը պիտի համապատասխանեին Արամի ու Բարշամինի և Հայկի ու Բելի հարաբերություններին<sup>15</sup>:

Բելը, Բարելոնի աստվածացված արքան, բարելոնյան (սկզբնապես արևմտասկեմական) մեծ աստված Բել-Մարդուկն Ի<sup>6</sup>: Բարշամին / Ba'äl Šamîn անվան առաջին մասը սոուզաբանորեն նույնական է Բելի անվան հետ: Հայկի և Բելի առասպելի ձեւավորման վրա ակնհայտ է աստվածաշնչյան ազդեցությունը: Հայկը Հայաստան է զայիս բարելոնյան աշտարակաշինությունից հետո, իսկ Բելը նույնացվել է աստվածաշնչյան Ներրովթին և հանդես է զայիս որպես Բարելոնի աստվածացված բրնակալ<sup>17</sup>: Արասպեկի սկզբնական տարբերակում Բելը կարող էր լինել արևմտյան սեմականների և ոչ Բարելոնի աստված, և Արամի ու Բարշամի (Բարշամինի) առասպելը, այդ տեսակետից, հնարավոր է, որ առավել վաղնջական է:

Արա անվան ծագումն այնքան էլ պարզ չէ, բայց համահունչ է \*h<sub>2</sub>ner- արմատի հայկական արտացոլումներին, որը ածանցյալ ձեւերում կարող է հանդես գալ ար- հիմքով (հմմտ. արի, արական ևն)<sup>18</sup>: Հատկանշական է, որ Արայի առասպելի տարբեր դրվագներում շեշտվում է այր արմատը՝ Արան էպոնիմն է Հայաստանի կենտրոնական Այրարատ նահանգի, նա կոչվում է «այր պատկերաձին», Շամիրամը կոչվում է «այրասիր» (Սեբեոս, Ա, Խորենացի, Ա. ժq), իսկ մի հերիածում Արի Արմանելի (հմմտ. արի) կոչվող հերոսը, կարծես, ներկայացնում է առասպեկական Արա Գեղեցիկի՝ (Արամի որդու) ուշ, հերիածույին տարբերակը<sup>19</sup>:

<sup>13</sup> U. F. Հայ առասպեկաբանություն. Բելութ, 2000, էջ 230 հոտն., Epic, p. 43 ff.

<sup>14</sup> Այս բառի վերաբերյալ տե՛ս Գ. F. Զայնու կամ ն. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան. Երևան, 1987, էջ 140, 182-183 (այս բառը, թերևս, բաղարկվել է այլ արմատների հետ), F. Kortlandt and R. Beekes. Armenian Comparative Notes by Frederik Kortlandt with an Appendix on the Historical Phonology of Classical Armenian by R. Beekes. Ann Arbor, 2004, p. 210.

<sup>15</sup> Epic, p. 131 f.; A. Petrosyan. State Pantheon of Greater Armenia: Earliest Sources.— Aramazd - Armenian Journal of Near Eastern Studies, 2 (2007), p. 192-193.

<sup>16</sup> Epic, p. 58.

<sup>17</sup> Բելի՝ Բարելոնի հետ ունեցած կապի վերաբերյալ տե՛ս Երևմիա, 44:

<sup>18</sup> Հ. Աճառյան արմատական բառարան. հ. I, Երևան, 1971, էջ 173:

<sup>19</sup> Г. А. Капанцян. Историко-лингвистические работы. Т. 1, Ереван, 1956, с. 187; Epic, 88, 131, n. 447.

Հնդեվրոպական \*dānu-ի հայկական կանոնավոր անդրադարձը կլիներ խան (բաղաձայների տեղաշարժով, երկար վանկի կարճացմամբ և վերջին վանկի անկմամբ): Նման անուն ավանդված չկա հայ առասպելաբանության մեջ, բայց կարելի է կարծել, որ Բելի տոհմի ծագումը Տիտանից (նույնացված աստվածաշնչյան Քամի հետ) և Բելի ու նրա ծառանզների մշտական «Տիտանեան» կոչումը հայ հեղինակների մոտ արտացոլում են նախնական տան-ի ձևափոխությունը և նույնացումը հունական Տիտան-ին<sup>20</sup>: Մյուս կողմից, Թորդանի երկրորդ մասը նույնպես հիշեցնում է \*dānu-ն (արմատի ոչ հայկական զարգացմամբ): Արա Գեղեցկի կերպարը համադրելի է իորանդական ավանդության մեջ Դանու աստվածուհու ցեղերի արքա «զեղեցիկ» Բրեսի կերպարին, ինչը միավորում է հայ ազգածին հերոսներին Դանուի առասպելական համայնքի հետ (տե՛ս ստորև):

### Խեթական թագավորություն

Խեթական առասպելաբանության մեջ Իլլույանկա օձ-վիշապը սկզբնապես հաղթում է ամպրոպի աստծուն: Վերջինիս դուստրը՝ Ինարան, իր մահկանացու սիրեկանի հետ օձին հրավիրում է իր տուն: Նրանք ուտում են և խմում, ու երբ օձը հարրում է, ամպրոպի աստվածը զալիս և սպանում է օձին: Առասպելի մեկ այլ տարրերակում աստծու որդին ամուսնանում է օձի դստեր հետ և օգնում հորը հաղթելու նրան, ինչի ընթացքում ինքն էլ զրիվում է<sup>21</sup>:

Խեթական առաջին տեքստը ներկայացված է որպես Ներիկ քաղաքի ամպրոպի աստծու քրսի խոսք՝ պուրուլի տոնի ժամանակ: Ներիկը Փոքր Ասիայի խաթական, այսինքն՝ նախախեթական (ոչ հնդեվրոպական) կրոնական ամենակարևոր կենտրոններից էր: Տարուն, Ներիկի ամպրոպի աստվածը, զլիսպրում էր տեղական դիցարանը:

Ծիսական այս տեքստը քննարկվել է հնդեվրոպական ամպրոպի աստծու առասպելի համատեքստում՝ առասպելի ու նրա բանաստեղծական լեզվի հիմնական ատաղձը հնդեվրոպական են<sup>22</sup>: Inara անվանումները տեսականորեն համադրելի են h₂ner-ին (ծագած տարրեր լեզուներից): Illuyanka-ի ծագումը պարզուց հնդեվրոպական է: Նրա վերջին մասը հանգում է հնդեվրոպական «օձ» արմատի մի տարրերակին (\*h₂engʷʰo-), իսկ ողջ անունը ստուգաբանորեն լատ. anguilla «օձաձուկ» բառի մի շրջած համապատասխանությունն է<sup>23</sup>: Purulli և Taru անունները, չնայած այլ կարծիքների գոյությանը, նույնպես դիտ-

<sup>20</sup> Հունական ազդեցությունն ի հայու է զալիս նաև ազգածին ավանդության այլ անուններում՝ հմւնու օրինակ՝ Կամուս (Հայկի թոռն է, Կամուսայ տան՝ աստրեստանյան Kadmuhi/ Katmuhi երկրի էպոնիմը), Նինոս (Բելի հետնորդն է), Յապէտոս (նույնացված աստվածաշնչյան Հարեթի հետ):

<sup>21</sup> H.A. Hoffmann e. Նշվ. աշխ., էջ 11 f.

<sup>22</sup> В я ч. В с. И в а н о в, В. Н. Т о п о р о в. Исследования в области славянских древностей. М., 1974, с. 122 сл.; B. L i n c o l n. Նշվ. աշխ., էջ 117 ff.; C. W a t k i n s. How to kill a Dragon. Oxford, 1995, p. 321 f., 444 ff.; Epic, p. 6 ff.

<sup>23</sup> J. K a t z. How to be a Dragon in Indo-European: Hittite Illuyankas and its Linguistic and Cultural Congeners in Latin, Greek, and Germanic.— Mír Curad. Studies in Honor of Calvert Watkins. Innsbruck, 1998, p. 320 ff.

վել են որպես հնդեվրոպական փոխառություններ (ոչ խեթերենից), իսկ Inara- ն հիշեցնում է հնդեվրոպական \*h₂ner-ը<sup>24</sup>:

Միևնույն ժամանակ, չնայած հնդեվրոպական կապերին, այս առասպելում դանակա, Բալի կամ Բել անունների խեթական զուգահեռ ձևերի ոչ մի հետք չկա:

### Հունաստան

Պուեյդոնի որդի Բելոսը (Bēlos) սերում է Եգիպտոսին ու Դանասուին (Danaos): Եղբայրները վիճում են, և Դանաոսը թաքնվում է Արգոսում, որտեղ էլ արքա է դառնում: Եգիպտոսի հիսուն որդիները հետապնդում են Դանասուին ու նրա դուստրերին, ցանկանալով նվաճել նրանց, և, ի վերջո, հասնում են իրենց նպատակին: Դանաոսը դուստրերին պարտավորեցնում է սպանել իրենց ամուսիններին առաջին իսկ ամուսնական զիշերը: Լինկեսը, նրանցից միակ կենդանի մնացածը, վերջում սպանում է Դանասուին:

Մի քանի սերունդ հետո Զեսը, ուկե անձրեկի տեսրով, այցելում է Դանաեին (Դանասուի սերունդներից), ինչի հետևանքով վերջինս ծնում է Պերսեսին, Հունաստանի մեծագոյն հերոսներից մեկին: Պերսեսն ամուսնանում է Անդրոմեդա (Andromedē) հետ:

Տրոյական պատերազմի պատճառը Պարիսի՝ Տրոյայի արքայի որդու կողմից հունական գեղեցկուի Հելինեի առևանգումն էր: Պարիսը կոչվել է նաև Ալեքսանդրոս (Apoll. 3.12.5), իսկ հոյսները «Իլիականում» հաճախ կոչվում են դանայացիներ (Danaoi): Պատերազմի վերջում Պարիս-Ալեքսանդրոսը սպանում է հոյսների մեծ հերոս Արիլեսին:

Բելոսը արևմտասեմական Բաալի հունական ձևն է: Անդրոմեդէ և Ալեքսանդրոս անունները կապված են \*h₂n̥i-ro-ին (հոյսն. anēr «այր, տղամարդ», սեռ հոլովում՝ andros): Դանայացիները (< \*danawo), ակնհայտորեն, համադրելի են հնդիրանական դանավանների հետ: Պուեյրոնի անունը ևս դիտվել է այս համատեքստում (\*poti- «տեր» + da/onu-)<sup>25</sup>: Նկատենք, որ Պերսեսի (Դանաեի որդու) և Անդրոմեդեի առասպելում արական ու իգական անունները հանդես են զայիս մյուս ժողովուրդների առասպելների համեմատ հակառակ՝ շրջված կարգով:

### Ուելս և Իռլանդիա

Դօն աստվածուին, հնդ. Dānu-ի ուելսյան համապատասխանությունը, կարող է դիտվել որպես մահվան աստված Beli-ի կինը: Այս զույգը հայտնի է իբրև

<sup>24</sup> B. H. Т о п о р о в. Хеттск. Purulia, лат. Parilia, Palilia и их балканские истоки.– Балканский лингвистический сборник. М., 1976; С. Л. Николаев, А. Б. Страхов. К названию бога громовержца в индоевропейских языках.– Балто-славянские исследования, 1985. М., 1987, с. 150; Epic, p. 34 f., 156. Ինարայի՝ անաստոլիական \*h₂ner-ի հետ ունեցած հնարավոր «ժողովրդական ասուզարանական» առնչությունների վերաբերյալ տե՛ս J. Puhvel. Hittite Etymological Dictionary: Trends in Linguistics. Vol. I, Berlin–New York. p. 62, 368.

<sup>25</sup> H. F r i s k. Griechisches etymologisches Wörterbuch. B. II. Heidelberg, 1973, s.v.

որոշ հին աստվածների ծնողներ: Բելին համարվում է նաև Ուելսի արքայական որոշ տոհմերի նախահայրը<sup>26</sup>:

Իոլանդական ավանդության մեջ *Danu*-ն մայր աստվածուհի է, որի անունով է կոչվում *Tuatha Dé Danann*՝ «Դանու աստվածուհու ցեղերը»: Այս առասպելական ցեղի ներկայացուցիչները Իոլանդիան մինչև իոլանդացիների զալուստը բնակեցրած աստվածություններ են: Դանու ցեղի առաջին արքան էր Նուադու Արծարաձեռնը, որի ուելյան գուգահեռ Լուտ Արծարաձեռնը Բելիի որդին է:

Նուադուից հետո, կանանց պահանջով, արքա է ընտրվում ցեղեցիկ Բրեսը կամ Էռխայր Բրեսը (*Bres*՝ «ցեղեցիկ»): Նրա մայրը Դանուի ցեղից էր, իսկ հայրը՝ ֆումոր (չար աստվածությունների դաս): Բրեսը՝ որպես արքա, անհաջողության է մատնվում և փախչում ֆումորների մոտ: Մեծ ձակատամարտ է տեղի ունենում Դանուի ցեղի և ֆումորների միջև (այսպես կոչված՝ «Սագ Տուիրեղի երկրորդ ձակատամարտը»): Ֆումորների առաջնորդն էր Բալոր արքան, որի միակ աչքը ոչնչացնում էր թշնամիներին:

Իոլանդիայի նախապատմությունն ավարտվում է «Միլի որդիների»՝ իոլանդացիների առասպելական նախնիների զալուստով, որոնք և գրավում են կղզին Դանուի ցեղերից: Բարելոնի կործանումից հետո, անցնելով Եզիպտոսով, Ալյութիայով, Կրետեով, Սիցիլիայով և Իսպանիայով, նրանք հասնում են Իոլանդիա: Ինքը՝ Միլլ, որդին էր Բիլեհ, ուելյան Բելիի իոլանդական անվանակցի:

Շատ անորոշություններ կան Դոնի, Դանուի, Բելիի և Բիլեհ անունների և կերպարների մեջ: *Սակայն* Դոն-Դանու և Բելի-Բիլեհ համապատասխանությունները կելտական առասպելաբանության համատեքստում ընդունված են: Բալորը, ակնհայտորեն, նույնական չէ Բիլեհն, բայց և այնպես այդ անունը հիշեցնում է հնդեվրոպական աստվածների ու հերոսների նշանավոր հակառակորդների անունները (հմտություն. Բալի, Բել): Անկախ իրական ստուգաբանությունից, անունների համահնյունության պատճառով, Բալորի կերպարը կարող էր յուրացնել հնդեվրոպական հերոսների հակառակորդի հատկանիշները: Նկատենք Իոլանդիայի և Հայաստանի ձախողված տիրակալների՝ Բրեսի և Արա Գեղեցիկի կերպարների նմանությունը:

### Սկանդինավիա և Իսլանդիա

Հին սկանդինավյան առասպելաբանության մեջ աս կոչվող աստվածները հակառակած են վան կոչվող աստվածների դասին: Նրանց միջև տեղի ունեցած կործանարար պատերազմից հետո նրանք պատանդներ են փոխանակում, և վաներն ուղարկում են իրենց առաջնորդ Նյորդին (*Njördr*) ու նրա որդի Ֆրեյրին (*Freyr*)՝ ապրելու ասերի հետ: Ֆրեյրը («պարոն, տէր») կոչվել է նաև Ինգվի-Ֆրեյր (հավանաբար, ինգևոնների ցեղախմբի էպոնիմն է): Պատմական ավան-

<sup>26</sup> A. Rees and B. Rees. Celtic Heritage: Ancient Tradition in Ireland and Wales. London, 1961; A. Condriatieve. Danu and Bile: The Primordial Parents? – An Tríbhís Mhór: The IMBAS Journal of Celtic Reconstructionism. Vol. 1, № 4, Bealtaine, 1998. URL: <http://www.imbas.org/danubile.htm>.

դություններում Ֆրեյրի կերպարը, հավանաբար, նոյնական է դանիական Ֆրոդի (Fróði) անունով լեզենդար արքաներին<sup>27</sup>:

Ինգվի-Ֆրեյրը համարվել է շվեդական Ինգլինգների արքայատոհմի նախնին: Սկանդինավյան *dan* ցեղանվան էպոնիմները կապված են Ինգվի-Ֆրեյր/Ֆրոդիի հետ (արևելյան դաների մեջ առաջինն էր Ինգը, Սարսոն Քերականի «Դանիացիների գործերում» Դան անունով երկրորդ արքան հանդես է գալիս որպես Ֆրոդիի պապ, իսկ սրան հաջորդում է երրորդ Դանը, դանիական ժամանակագրության ցուցակում Ինգվին հանդես է գալիս որպես դանիացիների նախնի երեք եղբայրներից մեկը և այլն):

Ֆրեյրը Բելի (Beli) անունով հսկայի սպանողն է: Պետք է կարծել, որ Բելին եղել է Գերդրի՝ Ֆրեյրի կնոջ եղբայրը, քանի որ «Կրտսեր Էդդայում» (Skírnismál, 16) Գերդրը ասում է, թե եկած անծանոթ տղամարդը իր եղբոր սպանողն է:

Նյորդը անունը հանգում է \*h₂ner-t-ին: Դան ցեղանունը հիշեցնում է հունական դանայացիներին և Դանու աստվածուհու ցեղերին: Սկանդինավյան Բելին նոյնական է ու էլայան Բելիին:

Քննարկում և վերակազմություն

Բերկած առասպելներում կան մի քանի համադրելի անուններ և տերմիններ:

Հնդկաստան	nṛtama, Indra	Dānu, Dānava	Bali
Իրան	Narava	Dānava	
Օսկրիա	Nart	Donbettyr	Bliago (?)
Հայաստան	սրի, Արա (?)	Shitawán, Թորդան	Բել, Բարշամին (?)
Հունաստան	Alexandros, Andromedē	Danaos, Danaides, Danaē, Danaoi, Poseidon (?)	Bēlos
Ուելս		Dôn	Beli
Իռլանդիա		Danu	Bile
Սկանդինավյան և Բալկանիա	Njörðr	Dan	Beli

Երկրորդ սյունակի անունները և բառերը կապված են հնդկարպական \*h₂ner(t)- / \*h₂nro- «այր, տղամարդ, այրական ուժ» արմատին: Ինդրայի անվան այս ստուգաբանությունը կասկածի է ենթարկվում<sup>28</sup>: Այնուամենայնիվ, բերկած հնդկական առասպելներն անբաժանելի են մյուսներից: Սկանդինավյան ավանդություն Ինդրայի գործառությունը բաժանված է Նյորդրի և նրա որդի Ֆրեյրի միջև: Այսպես, Ինդրան դեաների առաջնորդն է ասուրաների դեմ, իսկ Նյորդրը (\*h₂ner-t-) վաների առաջնորդն է ընդեմ ասերի, ընդ որում, ասուրան

<sup>27</sup> Мифы народов мира, т. 2. М., 1982, с.в. Фрейр.

<sup>28</sup> M. M a y r h o f e r. Etymologisches Wörterbuch des Altindoarischen. Vol. I. Heidelberg, 1992, s.v.

աս անվանումները ստուգարանորեն կապված են<sup>29</sup>: Ինդրան ամուսնանում է իր սպանած թշնամու՝ դանավայի դստեր հետ, իսկ Ֆրեյրը՝ թշնամի հսկաների ցեղի կնոջ հետ, որի եղբորը սպանում է:

Ինդրա	Դեաների առաջնորդ	կովում է ասուրա- ների դեմ	ամուսնանում է ասուրայի դստեր հետ	սպանում է կնոջ հորը	հաղթում է Բալիին
Նյորդը	Վաների առաջնորդ	կովում է ասերի դեմ			
Ֆրեյր			ամուսնանում է հսկայի քրոջ հետ	սպանում է կնոջ եղբորը	սպանում է Բելիին

Հատկապես արդյունավետ է Ինդրայի համեմատությունը Պարիս-Ալեքսանդրոսի հետ<sup>30</sup>: Ինդրան ամպրոպի աստված է, իսկ Պարիսի անունը հիշեցնում է հնդեվրոպական ամպրոպի աստծու՝ \*Per(kʷ)u-ո-յի կրծատ անազրամը (հնդ. Պարչանյա, ուս. Պերուն, լիտ. Պերկունա): Ինդրան կովում է դանավաների դեմ, հաղթում նրանց առաջնորդ Բալիին, առևանգում և ամուսնանում դանավայի դրստր գեղեցիկ Շաշի՝ կանանցից ամենացանկասերի, իսկ Պարիս-Ալեքսանդրոսը կովում է հույն դանայացիների դեմ, սպանում նրանց մեծագույն հերոս Արփիլեսին, առևանգում և ամուսնանում է կանացից ամենազեղեցիկի՝ Հեղինեի հետ: Մի ավանդության համաձայն, Հեղինեն դառնում է Արփիլեսի կինը (Paus. 8.23.6): Վեճայական առասպելում Ինդրան սպանում է Վրտրային, որը կոչվում է ahi «օձ» (< \*h₁egʷhi- / \*h₂engʷhi-, «օձ» նշանակությամբ արմատի մի տարրերակն է): Ծատ հատկանշական է, որ Արփիլեսի անունը և կերպարը նույնպես հանգում են նույն արմատին<sup>31</sup>: Այսինքն՝ Պարիս-Ալեքսանդրոսի և Արփիլեսի հարաբերությունը համապատասխանում է Ինդրա - ahi հարաբերությանը: Ավելին, Ծիգ-վեղայի մի հիմնում (1.174.1) Ինդրան ոգեկոչվում է այրերին պահպանելու (τακσά νῆον), ընդ որում, օգտագործվում է այն նույն ստուգարանական բանաձեռ, որը ներկայացնում է Ալեքսանդրոս անունը (հուն. alex + andros «այրերի պաշտպան»): Դա հնարավորությունէ տալիս վերականգնել հնդեվրոպական \*h₂lek- + \*h₂ner- բանաձեռ, որով նշանակվող կերպարը հակառված է առասպելական օձին:

Այս հնդեվրոպական հակառվածին մի արտացոլումն է հիշյալ խեթական առասպելը (եթէ նույնիսկ Ինարայի անունը խաթական է, նման հնչողության պատճառով այն բերվել է հնդեվրոպական բանաձեռի տակ):

<sup>29</sup> M a l l o r y and A d a m s. Նշանակությամբ:

<sup>30</sup> A. Y. Petrosyan. Proto-Paris and Proto-Achilles in Indo-European Context.— Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies 3, 2008.

<sup>31</sup> В. Н. Топоров. К реконструкции “прото-Ахилла”.— Балканы в контексте Средиземноморья. Проблемы реконструкции языка и культуры. М., 1986, с. 25–37. Նույնիսկ Օբարական слово в образе Ахилла (Проблемы реконструкции элементов прототекста).— Образ — смысл в античной культуре. М., 1990, с. 64–95.

<i>Ինդրա</i>	* <i>h₂le<sup>k</sup>- + h₂ner-</i>	Դանա- վաների թշնամի	առևանգում է Շա- շին	սպանում է «օձ» Վրտրային
<i>Պարիս-U- լեքսանդ- րոս</i>	* <i>h₂le<sup>k</sup>- + h₂ner-</i>	Դանայա- ցիների թշնամի	առևանգում է Հե- ղինեին	սպանում է «օ- ձային» Արփե- սին
<i>Խեթ. ամպ- րոպի աստված</i>	դուստրը՝ <i>Ինարա.</i> <i>հմմտ. h₂ner-</i>		որդին ամուսնա- նում է Իլույան- կայի դստեր հետ	սպանում է «օձ» Իլույանկային

Այս համապատասխանությունները ցույց են տալիս, որ Ինդրայի անունը, իր իրանական զուգահեռի հետ, չնայած սոսուզարանական դժվարություններին, պետք է հանգի \**h₂nro-ին*, թերևս, տարուիստական ձևափոխմամբ, *d*-ի հավելումով: Նաև հնարավոր է \**h₂nro-ի* ձևափոխությունը հնդեկլրոպական մեկ այլ լեզվի ազդեցությամբ (*հմմտ. հուն. andros*) կամ նույնիսկ փոխառություն հենց նույն աղբյուրից:

Հնդ. *Dānu* (Dānava) ձեւերը, ինչպես ասվեց, կապված են հնդեկլր. \**deh₂-* «հո-սել» արմատին: Ականդինավյան դան ցեղանունը և հայկական Թորդան տեղանունը չեն կարող ուղղակիորեն կապված լինել հնդեկլր. \**deh₂-ին*, քանի որ դրանք չեն ենթարկվել հայկական և գերմանական լեզուներին բնորոշ բաղաձայների տեղաշարժի \**d* > *տ*, \**d* > *t* (Թորդան ավանի անվանումը հայերենում հասկանալի չէ և, հավանաբար, փոխառություն է, այնպես, ինչպես և աստծու անունը, որը պաշտպում էր այնտեղ): Այդ հերոսներից ոմանք ակնհայտ ձևով կապված են ջրի հետ (հնդ. Դանուն տիեզերական ջրերի մայրն է, Դանասոր ծագում է ջրերի աստված Պուելդոնից, Դանասի դուստրերը դատապարտվում են հավերժ ջուր կրելու և այլն): Հնդեկլրոպական մի շարք գետանուններ հանգեցվում են \**deh₂nū-ին*. օրինակ, *Danub* (կելտական ծագման), Դոն, Դոնեց, Դնեպր, Դնեստր (իրանական ծագման)<sup>32</sup>, *Dunajs* (Լատվիա), *Donwy*, *Don* (Ուկր., Անգլիա) և այլն<sup>33</sup>: Այլ կարծիքի համաձայն, այս անվանումները կարելի է հանգեցնել \**dhōnu-* / \**dhonu-* «զետ» արմատին. հմմտ. \**dhen-* «հոսանք»<sup>34</sup>: Այս երկրորդ արմատը կարող է լավ բացատրել հիշված անվանումներից շատերը:

Բալին և նրա համապատասխանությունները կարող են համարվել Դանուի խմբի առաջնորդները: Հայկական ավանդության մեջ Բելի՝ Բարեկլոնի բոնակալի և Բարշամ / Բարշամինի՝ սիրիական աստծու, սիրիացիների նախնու, իսկ հունականում՝ Բելոսի ծագումը սեմական Եղիշեցից դուրս է

<sup>32</sup> Կարելի է նկատել, որ Նեպր (= Դնեպր) Կորոլկիչնան, Դոն Իվանիչը և Դունայ (= Դանուր) Իվանիչը հանդես են զայս ուստական բիլինաներում: Դունայը կին է գտնում Վլադիմիր իշխանի համար, իսկ Դնեպրի մասին որոշ լեզենդներ համադրելի են Ինդրայի և Վրտրայի առասպելի հետ. տե՛ս Յ. Վ. Իվանով և Յ. Հ. Տոպորով. Միֆологические географические названия как источник для реконструкции этногенеза и древнейшей истории славян.– Вопросы этногенеза и этнической истории славян и восточных романцев. М., 1976, с. 116 сл.

<sup>33</sup> *St* և օրինակ, J. P. Mallory and D. Q. Adams. *Urzum. Ego 486–487*:

<sup>34</sup> Նոյն տեղում, *Ego 486*:

(արևմտաեմ. *Ba'l, Ba'lu, Ba'al, աքաղ. Be'l*): Ամեն ինչ չէ, որ պարզ է հնդ. Բալիի (*e > a* կանոնավոր զարգացմամբ), կելտ. Բելի / Բիլելի և սկանդինավ. Բելիի անուններում, բայց քննարկվող առասպելների համատեքստում նրանք կարող են համադրվել հուն. Բելոսի և հայ. Բելի հետ<sup>35</sup>: Այս անունները չեն կարող կապված համարվել հնդեվրոպական մակարդակում (հնդեվրոպական *b*-ի վերականգնումը հավանական չէ. հայկական և սկանդինավյան ձևերը չեն ենթարկվել բաղաձայների տեղաշարժի): Դա ցույց է տալիս այդ առասպելական կերպարի ուշ, փոխառյալ բնույթը:

Ինդրա - Բալի հարաբերությունը համադրելի է հայ հերոսների և նրանց սեմական հակառակորդների հարաբերությանը: Ինդրան ամպրոպի աստված է, իսկ Հայկը և Արամը ամպրոպի աստծու վիպական տարբերակներ: Այս հերոսների աստվածային համապատասխանությունը՝ Արամազդը, նույնպես ամպրոպի աստված էր:

<i>Ինդրա</i>	<i>nṛtama &lt; h₂ner-</i>	<i>ամպրոպի աստված</i>	<i>Բալիի հակառակորդը</i>
<i>Հայկ</i>	<i>արփ &lt; h₂ner-</i>	<i>ամպրոպի աստծու վիպական համապատասխանությունը</i>	<i>Բելի (b'I) հակառակորդը</i>
<i>Արամ</i>		<i>ամպրոպի աստծու վիպական համապատասխանությունը</i>	<i>Բարշամ-Բարշամինի (b'I) հակառակորդը</i>
<i>Արամազդ</i>	<i>արփ &lt; h₂ner-</i>	<i>ամպրոպի աստված</i>	<i>հավանաբար հակադրված է Բարշամինին (b'I)</i>
<i>Բաթրազ</i>	<i>nart &lt; h₂ner-</i>	<i>ամպրոպի աստծու վիպական համապատասխանությունը</i>	<i>Բյազոյի հակառակորդը</i>

Այսպիսով, Բալիի անունն անբաժանելի է հայկական հերոսների հակառակորդների անունից և պետք է ծագեցվի սեմական *b*-ից<sup>36</sup>: Նույնը վերաբերում է և Բյազոյին: Ֆրեյրի (Նյորդրի որդու) և Բելիի հարաբերությունը պարզությունում է Ինդրայի ու Բալիի և հայկական հերոսների՝ իրենց հակառակորդների հետ հակադրությանը: Ուրեմն, հնդեվրոպական հերոսների հակառակորդը այս առասպելներում, իրոք, սեմական *B'* աստվածն է:

Դատելով բառակզբի *b*-ից, կարելի էր կարծել, որ այդ անունը մտել է հայկական և սկանդինավյան ավանդույթներ այդ լեզուներում բաղաձայների տեղաշարժից հետո (օրինակ՝ սիրիականից հայերեն և կելտականից սկանդինավյանից):

<sup>35</sup> Այս կելտական անունների, հնդ. Բալիի և հուն. Բելոսի համապրությունը տես՝ A. Rées and B. Rées. Նշվ. աշխ., էջ 365–366 (նկատենք, որ բերված բազում համեմատությունների մի մասն անընդունելի է):

<sup>36</sup> Այս առթիվ կարելի է հիշել հնդկական առասպելաբանության այլ հերոսների և իին Առաջավոր Ասիայի պատմական որոշ անունների նույնացման հիպոթետիկ փորձերը՝ արված Բանաբարի Շաստրիի և այլոց կողմից: տես՝ Epic, p. 92, 106, n. 374 (գրականությամբ):

նավյան): *Բայց բերված հնդեվրոպական համապատասխանությունները իին կապեր են ցույց տալիս: Ակնհայտ է, որ որոշ ավանդույթներում սեմական Եղ-քարող էր վերահմաստավորվել հնդեվրոպական համահունչ արմատների միջոցով* («ժողովրդական ստուգաբանություն»), ինչը կարող է բացատրել հիշյալ լեզվաբանական անհամապատասխանությունը (հմմտ. օրինակ \**bhel*- «փայլել, սպիտակ» և \**bhel-* «ուղչել»)<sup>37</sup>:

Քննարկվող առասպելների մեծ մասում հակադրության դրական կողմը ներկայացված է առնական և հերոսական \**h₂ner-*ներով, իսկ բացասականը՝ Դանուն է: «Ամենաառնական» Ինդրան և առնական Նարավան հակադրված են դանավաներին: Նարթերը, որոշ առումներով, հակադրված են դոնքետսրբներին, «արի» Հայկը Հայաստանի հիմնադիրն է և անվանադիր նախնին, Նյորդը սկանդինավյան որոշ էպոնիմների և արքաների նախնին է:

\**H₂ner-* տղամարդիկ կովում և սովորաբար հաղթում են իրենց Դանու հակառակորդներին ու նրանց առաջնորդ *B'1*-ին: Ինդրան կովում է դանավա *Բալիի* դեմ, Հայկը սպանում է *Բելին*, Լինկեսը սպանում է Դանապին, Պարիս-Ալեքսանդրոսը կովում է դանայացիների դեմ և սպանում *Արիլեսին*, Ֆրեյրը՝ Նյորդի որդին, սպանում է *Բելիին*:

\**H₂ner-* տղամարդիկ առևանգում և ամուսնանում են Դանու կանանց հետ: Ինդրան առևանգում է դանավա Պուլումանի դստերը և ամուսնանում նրա հետ, նարթեր Ախսարտազը և Խամրցը ամուսնանում են դոնքետսրբների դուստրերի հետ, Եգիպտոսի որդիներն ամուսնանում են Դանաոսի դուստրերի հետ, Պարիս-Ալեքսանդրոսը առևանգում է Հեղինեին և ամուսնանում նրա հետ: Այս կանայք հիշեցնում են հունական նիմֆերին կամ հնդկական ապսարներին, առասպելական դասերի կանանց, կապված ջրի հետ, որոնք, հաճախ իրենց կամքից անկախ, դառնում են աստվածների և հերոսների կանայք (հմմտ. Զևսի ու Թետիսի, Զեսի և Էգինեի, Վիշվամիտրայի ու Մենակայի առասպելները և այլն):

Որոշ առասպելներում կերպարների և անունների նորմալ կարգը շրջվել է. Դանուն հանդես է զայխ որպես դրական կողմ (հուն. դանայացիները, սկանդինավ. Դանը, իուլանդ. Դանու աստվածուհու ցեղերը, երբ կովում են ֆոմորների դեմ), իսկ \**h₂n̥to-*ն հանդես է զայխ Դանաոսի հետնորդի կնոջ անվան մեջ (Պերսես՝ Դանաեի որդին, ամուսնանում է Անդրոմեդեի հետ): Այս առասպելներում «առնական» հնդեվրոպական ամպրոպի աստվածը, որը տարբեր լեզուներում հանդես է զայխ տարբեր անուններով, հաղթում է *Բաալին*՝ արևմտասեմական ամպրոպի աստծուն, կին առևանգում այդ ցեղից և ամուսնանում նրա հետ: Իրենց աստծու օրինակին են հետևում նաև որոշ այլ «առնական» հերոսներ՝ ամպրոպի աստծու վիպական ձևափոխությունները: Այս վերակազ-

<sup>37</sup> Հայկական ավանդության մեջ բացահայտ սեմական *Բելի* այդօրինակ կապերի վերաբերյալ տե՛ս U. F. Հարությունյան. նշվ. աշխ., էջ 231, U. Պետրոսյան. Բաղդասարի կերպարի հնագույն հիմքերը. – Հին Հայաստանի մշակույթը XII. Հանրապետական գիտական նստաշրջան. զեկուցումների հիմնադրույթներ. Երևան, 2002, էջ 37-39.

*մությունը համադրելի է հնդեվրոպական ամպրոպի աստծու և նրա կնոշ առասպելի հետ<sup>38</sup>:*

Հստ ամենայնի, *dehnu-* / \**dhonu-* անվանումները, գոնե առասպելների մի մասում, բաղարկվել են ինչ-որ համահունչ *Danu* ցեղանվան հետ: Քննարկվող առասպելները կապված են ժողովուրդների ազգածնության հետ (հմմտ. Հայկի, Դանառսի, Դանու աստվածուհու էպոնիմային կերպարները): Ավելին. կարելի է ենթադրել, որ \**h₂n̥er-*ների կթնիկական ինքնությունը, ապա և նրանց առնական ուժը ձևավորվում է նրանց՝ Դանուի հետ հակադրության արդյունքում: Այս առասպելներում սեմական մեծ աստվածը, ներկայացված որպես հնդեվրոպական աստվածների հայելային, բայց բացասական հատկանիշներով անդրադր, փոխարինում է նախնական առասպելում աստծու հակառակորդ օձին (հմմտ. Վրտրայի կերպարը՝ դանավա, օձ, անդրաշխարհի տիրակալ, Ինդրայի հակառակորդ վեղայական առասպելում)<sup>39</sup>: Այս առասպելները կարող են ձևավորվել հնդեվրոպական և սեմական ցեղերի (որոնք հանդես են զալիս որպես Դանուի տոհմ, *B'1* աստծու առաջնորդությամբ) շիման արդյունքում, իսկ հետո տարածվել հնդեվրոպական աշխարհի այլ շրջաններ:

Դիտարկված հնդեվրոպական առասպելական մոտիվներն ու անունները գուգահեռներ ունեն (արևմտասեմական ավանդույթում: Այսպես, Մարդուկը նետահարում-սպանում է ջրային հրեշ «ծով» Տիամատին (հմմտ. Հայկի՝ հակառակորդին նետահարելը, որտեղ *Բելը* հենց *Բել-Մարդուկն* է): Բաալը սպանում է «զետի դատավոր / տէր» Յամմուին («ծով») (հմմտ. հնդեվրոպական աստվածների կոհիվը ջրային / զետային հրեշների հետ): Բաալը սպանում է վիշապ Տաննի-ին (հմմտ. դանու). հյուսիս-սիրական Ուզարիտ քաղաքի նախնի էպոնիմն էր *Ditanu* / *Didanu-* ն (հմմտ. Դանուի և «Տիտանյան» *Բելի* կերպարները)<sup>40</sup>: Սա ցույց է տալիս հին կապերի և փոխազդեցությունների գոյությունը:

Աղանա քաղաքը Կիլիկիայում, Սեյհան զետի վրա, հայտնի խեթական աղյուրներից *Atanīya* անվանումով արդեն մ. թ. ա. XVI դ. քննվել է \**dehnu-/dhonu-* ի առնչությամբ (¶ կամ \**e/o* «մոտ, մերձ» + *զետ*)<sup>41</sup>: Այստեղ էր զտնվում դանունացիների երկիրը, որտեղ զտնված մ. թ. ա. VII դ. երկլեզու՝ հիերոգլիֆային լուվերեն և փյունիկերեն արձանագրությունը ցուցադրական մի օրինակ է պատմական դանու ցեղի: Փյունիկերեն տերսուր սկսվում է այսպես:

<sup>38</sup> *Տես* В. В. И в а н о в, В. Н. Т о п о р о в. Исследования...

<sup>39</sup> Այս առթիվ կարելի է հիշել նույն պատկերը ֆիննո-ուգրական ցեղերի առասպելներում, որտեղ երկնային աստծու անունը, որպես օրենք, բնիկ է, մինչդեռ նրա հակառակորդը, ստորերկրյա աշխարհի տիրակալը, հաճախ փոխառված աստվածություն է, որը դրական գործառություններ ունի այն ավանդույթում, որտեղից փոխառվել է. տես ս. А. И. А յ շ ե ն վ ա լ ь դ, В. И. П е т ր ү չ ի ն, И. А. Х ե լ ի մ ս կ ի յ. К реконструкции мифологических представлений финно-угорских народов.– Балто-славянские исследования, 1981. М., 1982, с. 188.

<sup>40</sup> Հմմտ. М. Р. D e x t e r. Reflection..., p. 54–55. *Բերված ուզարիտյան առասպելների վերաբերյալ* տես ս. И. Ш. Ш и ֆ մ ա ն. Կոլլեկցիա դրամների պատմությունները. Մ., 1987, с. 73 և այլն.

<sup>41</sup> Y. A r b e i t m a n n and G. R e n d s b u r g. Adana Revised: 30 Years Later. – Archiv orientalni, 49, 1981, p. 149 f.

Ես, Ացատիվադան եմ, Բաալի օրհնյալը, Բաալի ծառան, որին Ա-վարիկուն՝ դանունացիների արքան, իշխանություն տվեց: Բաալը ինձ հայր և մայր դարձրեց դանունացիներին: Ես խթանեցի դանունացիներին ապրելու: Ես ընդարձակեցի Արանայի երկրի հարթավայրը արևելքից արևմուտք<sup>42</sup>:

*Դանունացիներն առաջին անգամ հիշվում են, հավանաբար, եզիստական աղբյուրներում մ. թ. ա. XIV դ.: Նրանք ներկայացնում էին «ծովի ժողովուրդների» կոնֆեղերացիայի մի նշանակալի մասը, որոնք հարձակվեցին Եզիստոսի վրա մ. թ. ա. XII դ.: Մեկ այլ «Դանունա երկիր» հիշվում է մի ասորեստանյան արքայի կողմից Կիլիկիայից հեռու, Հայկական լեռնաշխարհի հարավում (Կաշիարի լեռների շրջանում): Դժվար է լրիվ համոզվածությամբ որեւէ բան ասել դանունացիների էրնիկական ակունքների մասին<sup>43</sup>, բայց, պատմական ժամանակներում, նրանք, ակնհայտորեն, կապված էին արևմտյան սեմականների հետ (հմմտ. Դանի ցեղը, Խորայելի տասներկու ցեղերից մեկը): «Ելիականը» պատկերը ներկայացնում է դանու ցեղի կողմից: Այստեղ հակադրության դրական կողմը՝ հույն-դանայացիները հանդես են զայիս որպես Դանաոսի՝ Բելոսի որդու հետնորդներ: Նրանց մեծ հերոս Աքիլեսի անունը հանգում է «օձ» նշանակությամբ արմատին, իսկ նրանց հակառակորդ, Աքիլեսին սպանող Պարիս-Ալեքսանդրոսը վերահիմաստավորումն է ամպրոպի աստծու:*

Վ. Իվանովի և U. Ստարոստինի համաձայն, սեմականում կան նշանակալի քանակությամբ հնդեվրոպական փոխառություններ<sup>45</sup>: Հետաքրքրություն է ներ-

<sup>42</sup> K. L a w s o n Y o u n g e r. The Phoenician Inscription of Azatiwada: an Integrated Reading – Journal of Semitic Studies XLIII (1), 1998.

<sup>43</sup> Ացատիվադան կրում է լուվական անուն՝ «սիրկած (արևի աստված) Տիվատի կողմից» (լուվական տէրստում Բաալը համապատասխանում է արևի և ամպրոպի աստվածներին, այսինքն՝ Տիվատին և Տարխունտին, որոնք ներկայացված են զարդարագրով). Ավարիկու անունը ստուգարանվել է որպես խորական, փոյտական կամ «էգեան». տէ ս. A. B. Կօսյան. Лувийские царства Малой Азии и прилегающих областей в XII–VIII вв. до н. э. Ереван, 1994, с. 49 сл., 92; A. M. J a s i n k and M. M a g i n o. The West Anatolian Origins of the Que Kingdom Dynasty.– Studi Micenei ed Egeo-Anatolici 49 (2007) (հարցի գրականությամբ):

<sup>44</sup> Sē' u, օրինակ, B. П. Я л е н к о. Архаическая Греция и Ближний Восток. М., 1990, с. 127 сл. (գրականությամբ):

<sup>45</sup> В я ч. В с. И в а н о в. Двадцать лет спустя.— У истоков цивилизации. Сборник статей к 75-летию В. И. Сариниди. М., 2004, с. 45–46. S. A. S t a r o s t i n. Indo-European Glottochronology and Homeland. <http://www.santafe.edu/files/gems/> ehlcronology/Sergei.pdf. Վերջին հեղինակը, ցույց տալով, որ սեմական լեզուներում կան հնդեվրոպական մեծաքանակ փոխառություններ (առաջ ավելի հավանական էր համարվում փոքր քանակությամբ բառերի փոխառության հակառակ ուղղությունը), գտնում է, որ հնդեվրոպական (հնդիսերական) նախահայրենիքը պետք է գտնվիր «Բարեբեր մահիկի» հյուսիսում՝ այսինքն՝ հյուսիսային Միջազգետրում և Հայկական լեռնաշխարհի հարավում: Այստեղից հնդեվրոպացիների մի մասն անցել է հարավ՝ շիման մեջ մտնելով սեմականների հետ (որոնց մի մասին՝ հետագա հարավ-սեմականներին, մղել է դեպի հարավ), իսկ մյուս մասը՝ հյուսիս և հյուսիս-արևելք, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհ, որտեղից էլ անցել է Եվրոպա և Հնդկաստան՝ սկիզբ դնելով պատմական հնդեվրոպական լեզուներին: Ի միջի այլոց, սա համապելի է այն տեսակետի հետ, թէ հարավմիջազետքյան շումերական լեզվում կան հնդեվրոպական փոխառություններ, տէ ս հատկապես G.

կայացնում արևմտասեմական Դազան աստծու հանգեցումը հնդեվրոպական \*dheg'h-ում «հող, հողածին» և դրան հնցունարանորեն մոտիկ «ձուկ» արմատին: Այդպիսով հնդեվրոպական ծագում է վերագրվում մի աստծու, որը երբեմն համարվել է Բաալի հայրը: Այս փոխառությունները քննվել են հնդեվրոպացիների «նախահայրենիքի»՝ Հայկական լեռնաշխարհի հարավում և Միջազգետքի ու Սիրիայի հյուսիսում տեղայնացման տեսության համատեքստում: Նոյնիսկ անկախ հնդեվրոպական նախահայրենիքի տեղայնացումից, որը ներկայիս զիտության համար չափազանց բարդ խնդիր է, հնդեվրոպական և սեմական ցեղերի վաղ շփումները կարող էին տեղի ունենալ ոչ այլուր, քան նոյն տարածքներում: Դատելով առասպելներից՝ որոշ հնդեվրոպացիներ սահմանակցել են սեմականներին և նոյնիսկ խառնվել նրանց հետ (այսպես, թվում է, թե հոլյների մեջ եղել է ծագումով արևմտասեմական մի տարր, որի ներկայության արձագանքն է, կարծես, հնդեվրոպական առումով թշնամական կողմից ստեղծված տրոյական էպոսի առասպելական միջուկը): Այս առասպելները, հավանաբար, ձևավորվել են ընդհանուր հնդեվրոպական մայր լեզվից անատոլիական՝ խեթալուվական լեզուների անշատումից հետո (խեթական համապատասխան առասպելում սեմական անունների հետքեր, ինչպես տեսանք, չկան): Ավելի ուշ, պատմական ժամանակներում խեթերը և լուվացիները սահմանակցել են սեմականներին, բայց չեն առասպելականացրել նրանց:

## ИНДОЕВРОПЕЙСКИЕ ПАРАЛЛЕЛИ МИФА О ГАЙКЕ И БЕЛЕ: ИСТОРИЧЕСКАЯ РЕКОНСТРУКЦИЯ

*АРМЕН ПЕТРОСЯН*

Р е з ю м е

В некоторых индоевропейских мифах речные божества \*Dānu- (ср. dā- ‘течь’, \*dānu- ‘река’) противопоставлены богам или героям, чьи имена связаны с корнем \*Hner(t)- (\*hner-) ‘мужчина, мужская сила’. Мужчины \*Hner – борются с \*Dānu- и женятся на их дочерях. 1. Индия. Данавы, отпрыски Дану, под предводительством Бали, борются с девами, возглавляемыми Индрой (\*Hnro-?). 2. Осетия. Великие нарты (\*Hner-) женятся на женщинах племени водного божества Донбеттыра (‘водяной Петр’, от don < \*dānu- ‘река’). 3. Армения. Мужественный (ari < \*Hner-) Гайк, основоположник Армении, убивает вавилонского тирана Бела. 4. Греция. Сын Посейдона Bēlos рождает Эгипта и Даная. Пятьдесят сыновей Эгипта женятся на пятидесяти дочерях Даная. Троянец Париж-Александр (\*Hnro-) похищает красавицу греков-данайцев Елену. 5. Уэльс. Богиня Dōn рассматривается как жена Бели, бога смерти. 6. Исландия. Фрейр, сын бога Njörgðr-à (\*Hner-), убивает гиганта Бели. Арм. Бел и греч. Бэл восходят к семит. b'l ‘господин’. Не все ясно в этимологии инд. Бали, кельт. и скандинав. Бели, но в контексте приведенных мифов они могут быть соотнесены с

арм. Белом и греч. Бэлом. Мифические \*dānu- видимо были контамированы с реальным западно-семитским племенем, поклонниками Баала (ср. Даново колено, лув. Danuna, финик. Dnnym).

## INDO-EUROPEAN PARALLELS TO THE HAYK AND BEL MYTH: HISTORICAL RECONSTRUCTION

*ARMEN PETROSSYAN*

### S u m m a r y

In some Indo-European myths the river deities \*dānu- (cf. \*dā- ‘to flow;’ suffixed \*dānu- ‘river,’ \*dānawo-) are opposed to the gods/heroes whose names may be associated with \*Hner(t)- (\*h<sub>2</sub>ner-) ‘virile strength, man.’ The \*Hner- men fight against the \*dānu-s and wed the \*dānu- women. 1. India. The Dānavas (the children of Dānu) headed by Bali are the adversaries of the Devas, headed by Indra (\*Hnro-?). 2. Ossetia. The water god Donbetyr (‘Watery Peter,’ cf. *don* ‘river,’ \*dānu-) and his descendants represent the race of Donbetylrs. The great Narts (cf. \*Hner-t-) wed the daughters of Donbetylrs. 3. Armenia. The manly (*ari* < \*Hner-) Hayk, founder of Armenia, kills the Babylonian tyrant Bel. 4. Greece. Poseidon’s son Bēlos begets Aigypatos and Danaos. The fifty sons of Aigypatos marry the fifty daughters of Danaos (Danaïds). The Trojan Paris-Alexandros (\*Hnro-) abducts Helenē from the Greek *Danaoi* ‘Danaans.’ 5. Wales. The goddess Dôn (\*dānu-) can be regarded as the wife of Beli, god of death. 6. Iceland. The god Freyr, son of Njörðr (\*Hner-t-), kills the giant Beli. Arm. Bel and Gk. Bēlos are derived from the Semitic *b'l* ‘lord.’ Not everything is clear in the etymologies of Ind. Bali, Celt. and Norse Beli, yet nevertheless they may be related with Bel and Bēlos. The mythic \*dānu-s were probably conflated with a real West Semitic tribe, worshippers of Baal (cf. the Israelite tribe of Dan, Luw. *Danuna*, Phoen. *Dnnym*).